№ 26 Երեքշաբթի Մարտի 10 — 1887 — Երեքշաբթի Մարտի 10 № 26

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆիլոկսերայի մասին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ունգարական պատգամաւորների ժողով. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական նամակներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻԼՕԿՍԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Գինեգործութիւնը Կովկասում քիչ-քիչ սկսում է դուրս գալ իր ընկած դրութիւնից։ Ուսումնասիրելով այն միջոցները, որոնք պէտք են մեր երկրի արդիւնաբերութեան այդ նշանաւոր ճիւղը զարգացնելու համար, հարկաւոր է մի և նոյն ժամանակ ծանօթանալ այն վտանգների հետ, որոնք կարող են վնասել մեր երկրի խաղողի մշակութեանը և գինեգործութեանը։ Այդպիսի վտանգներից մէկն է և խաղողի որթի համար ֆիլօկսերան, որի մասին մարտի 4-ին պ. Ստրուվէ Կովկասեան Գիւղատնտեսական դաշտիում, կարդաց մի հրապարակական դասախօսութիւն։ Այդ դասախօսութեան ծրագիրը «Մշակի» անցեալ համարներից արդէն ծանօթ է մեր ընթերցողներին։ Ֆիլօկսերան մի հասարակ աչքով հազիւ նկատելի փոքրիկ կենդանի է, որը փչացնում է խաղողի որթը, և որը առաջին անգամ Եւրօպա բերվեցաւ Ամերիկայից։ Ցայտնի է, որ Ամերիկայի գիւտը մի մեծ հարստութեան աղբիւր բաց արեց եւրօպացիների համար։ Ամերիկայի բուսական, հանքային և այլ հարստութիւնները սկսեցին մեծ քանակութեամբ Եւրօպա բերել, ի միջի որոց և դեղանախնձորը ու քինայի կեղևը։ Վերջին տասն տարվայ մէջ իր վրա առանձին ուշադրութիւն դարձրեց ամերիկական խաղողի որթը, որը աչքի էր ընկնում իր անսովոր փառահեղութեամբ։ Ներկայ դարի 30-ական թուականներում առաջին անգամ Եւրօպա բերվեցան այդ խաղողի որթերը։ Այդ որթերի հետ միասին Եւրօպա բերվեցաւ և մի տեսակ սունկ, որը կոչվում է oidium tuckerei, որը առաջին անգամ նկատելի եղաւ Ֆրանսիայում, 1848 թուին, որտեղի խաղողի քնքոյշ որթերը սկսեցին վնասվել դրանից։ Այդ սունկը սկսեց մեծ արագութեամբ տարածվել եւրօպական խաղող մշակող երկրներում և մեծամեծ վնասներ հասցնել։ Չը նայած այդ վնասներին ամերիկական խաղողի որթերը մեծ քանակութեամբ Եւրօպա էին բերվում, և տարածվում Անգլիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Սպանիայում, և դրա հետ միասին սկսեց տարածվել վնասակար ֆիլօկսերան։

Ֆիլօկսերան ամերիկական խաղողի որթերին ոչինչ վնաս չէր տալիս, որովհետև այնտեղ նա ապրում է միայն խաղողի որթերի տերևների վրա. իսկ Եւրօպայում ֆիլօկսերան մտաւ խաղողի որթի արմատների մէջ, և ծծելով արմատների հիւթը, ոչնչացնում է խաղողի որթը։ Ֆիլօկսերայի անունը դուրս է գալիս յունական լեզուից, և բառական մտքով կը նշանակէ «տերևներ չորացնող»։ Ֆիլօկսերան երկու տեսակ է լինում, տերևի ֆիլօկսերա (ամերիկական որթերի վրա) և արմատի ֆիլօկսերա (եւրօպական որթերի վրա)։ Ֆիլօկսերայով հիւանդ որթի արմատները խոշորացոյցի տակ քննելով, կարելի է նկատել արմատի վրա՝ փոքրիկ կենդանիների խումբը, որոնք դոյնով շատ նման են արմատի գոյնին, ուստի և շատ անգամ չեն էլ նկատվում։ Ֆիլօկսերան ձմեռը քնում է և կենդանութեան նշաններ համարեա չէ ցոյց տալիս. Ֆիլօկսերան արագութեամբ բազմանում է. մի ֆիլօկսերան ածում է մինչև 400 ձու։ Վերջին ձուն ածելուց յետոյ ֆիլօկսերան սատկում է։ Զուրց դուրս են գալիս փոքրիկ միջատներ։ Գիտութեան մէջ դեռ ճշդութեամբ յայտնի չէ թէ ամբոյ ընթացքում ֆիլօկսերայի քանի սերունդ է աճում, բայց անհերքելի է, որ դոցա թիւը շատ կարճ միջոցում հասնում է միլիարդների։ Ամերիկական խաղողի որթերի ֆիլօկսերան, տերևի ֆիլօկսերա կոչվածը ապրում և աճում է որթի տերևների վրա, և նոյնպէս բազմանում է շատ մեծ արագութեամբ։ Կայ և մի երրորդ տեսակ ֆիլօկսերա, որը ածում է 4—6 ձու. այդ տեսակի ֆիլօկսերան բեղմնաւորվելու յատկութիւն ունի, դոցա մեծ տեսակի ձուերից դուրս են գալիս էգ ֆիլօկսերա, իսկ փոքր տեսակի ձուերից—արու ֆիլօկսերա։ Բեղմնաւորվելուց յետոյ արուն իսկոյն սատկում է, իսկ էգը սկըսում է ձու ածել,—և այդպիսով այդ վնասակար կենդանին անդադար աճում է և ոչնչացնում որթը։

Պէտք է նկատել և այն, որ եթէ խաղողի որթի մէջ չէ լինում այնքան հիւթ, որը բաւականութիւն տար բազմացող ֆիլօկսերային, վերջինս այդ տեսակ որթից անցնում է դէպի ուրիշ որթեր,—և այդպիսով խաղողի այգիները շատ կարճ միջոցում զոհ են դնում, աղքատացնելով բազմաթիւ այգետէրեր, և հարիւրաւոր միլիոն ռուբլի վնասներ պատճառելով։

Վերջացնելով իր առաջին դասախօսութիւնը, պ. Ստրուվէ յայտնեց, որ միւս դասախօսութեանը կը հաղորդի այն միջոցների մասին, որոնցով կռուել են և կռուում են ֆիլօկսերայի տարածման դէմ։ Այդ մասին կը հաղորդենք իր ժամանակին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բաթում, 3 մարտի

Իմ «Հայկական Տաւ. Հնչման» մասին «Մշակի» մէջ տպված յօդուածում բաւական թուով տպագրական սխալներ են սպրդել, որոնց կարևորները կը մեկնեմ ստ, ինդրելով որ բարեհաճէք յիշեալ սխալների ուղղած ցանկը տպագրել «Մշակի» առաջիկայ համարում։

«Մշակի» № 18, էջ ա., Սիւնակ գ. տող 2 տպված է՝ ի նախնեաց, պէտք է լինի՝ ի նախնեանց։ Նոյն տեղ, տող 27, տպված է (արաբ ج) պէտք է լինի (պարսկ. چ)։ Նոյն տեղ, սիւնակ դ., տող 21, տպված է կ. Մծբնացւոյ, պէտք է լինի Ց. Մծբնացւոյ։

№ 20, էջ բ., սիւնակ դ., տող 1, տպված է՝ ՉԷՐ ՉԱՅՆԵՐԸ, պէտք է լինի ՊԷՐ ՊԱՅՆԵՐԸ։ Նոյն տեղ, տող 14, տպված է՝ Զ հնչումով, պէտք է լինի Զ կամ Ջ հնչումով։ Նոյն տեղ, տող 16 տպված է՝ Զանկով, պէտք է լինի Ջանկով կամ Ձանկով։

№ 21, էջ ա, սիւնակ բ, տող 7 տպված է ԹԻՆԷՐ, պէտք է լինի ԲԻՆԷՐ։ Նոյն համարի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

V

Alles war gesagt, doch
Alles bleibt zu sagen
Göthe

—

Վերջին ժամանակներում փոքրիկ գողութիւնները մեր երկրի մէջ տարածված լինելով, ինչպէս, օրինակ, տաւար ու ձի գողանալն է, Անդրկովկասի կառավարչապետը դիմել էր արդարադատութեան մինիստրութեանը և միջնորդել էր շինական դատարանների իրաւասութիւնը Անդրկովկասում լայնացնելու համար, որպէս զի գիւղերում պատահած փոքրիկ գողութիւնները վճռվին նոյն իսկ հէնց շինական դատարանում, որովհետև շինական դատարանը դաւառի գործերի, հանդամանքների դրութեան հետ աւելի մօտ ծանօթ լինելով, քան թէ հաշտարար դատաւորը, աւելի շուտ կարող է բաւականութիւն տալ դանդատաւորին և այդպիսով դուցէ այդ տեսակ գողութիւնների թիւը սահմանափակէր*)։

Իշխան կառավարչապետի այդ միջնորդութեան հիման վրա մինիստրութիւնը պահանջել էր Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահ պ. Գօնչարովի կարծիքը այդ հարցի մասին և պ. Գօնչարով այն միտքն էր յայտնել, որ շինական դատարանի կօմպետենցիան, քաղաքացիական գործերում, պէտք է մեծացնել 30 ռուբլիից մինչև 100 ռուբլի, իսկ քրէականում իրաւունք տալ շինական դատարանին յանցաւորին պատժի ենթարկել մինչև մէկ ամիս բանտարկութեան։ Այդպիսով, ինչպէս տեսնում է ընթերցողը, մեր բարեմիտ կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում լայնացնել մեր շինական դատարանների կօմպետենցիան և նորան մի պատշաճաւոր դիրք տալով կանոնաւորել երկրի մէջ արդարադատութեան գործը։ Կարծում են, որ մեծացնելով շինական դատարանի իրաւասութիւնը գիւղական վարչութիւնը միջոց կունենայ աւելի մօտ կանգնել իր կոչմանը և օգտաւէտ լինել իր հասարակութեան համար։

Մենք չենք հերքում, չի հարկէ, այդ բոլոր վերանորոգութիւնների մեծ նշանակութիւնը երկրի բարօրութեան համար, մենք չենք հերքում, որ դաւառը հաւասար գիւղական հասարակութիւնների վրա բաժանելով և այդպիսով միջոց տալով շինական հասարակական վարչութեանը աւելի արի, աւելի արթուն լինել դէպի իր կոչումը, դաւառի, գիւղի կեանքը աւելի հանդիստ, աւելի հարթ կը լինի. մենք չենք հերքում, նոյնպէս, որ լայնացնելով շինական դատարանի իւրիսդիկցիան կը կանոնաւորվի գիւղական հասարակութեան մէջ արդարադատութեան գործը և այլն և այլն, բայց մենք չենք կարող համաձայնվել, որ շինական այդ ռեֆորմը կարողանայ դրական, շօշափելի օգուտ տալ երկրին մեր շինական վարչութեան ներկայ դրութեան ժամանակ. մենք կարծում ենք, ինչպէս այս բոպէիս պատիւ կունենանք հաստատել մեր խօսքը, որ այդ տեսակ վերանորոգութիւնները, ինչպէս և 61 թուականի ամբողջ շինականրեֆորմը բոլորովին բացասական նշանակութիւն կունենան մեր գիւղական, դաւառական կեանքի համար. նրանք շինական դատարանի և շինական տանուտէրի ձեռքը միայն զէնք կը տան աւելի լայնացնելու իրանց ամենանախիզ, ամենասարսափելի զեղծումների չրջանը և կը զրկեն ողորմելի գիւղացուն փաստերի դէմ բողոքելու, արդարութիւնը պաշտպանելու և, դուցէ, երբեմն էլ գործը տանելու համար։ Շինական դատարանի առաջին պայմանն է դատավարութեան արագութիւնը։ Որքան որ փոքր է գիւղացու դանդատը, այնքան էլ շտապ լուծումն է պահանջում նա։ Գիւղացին դիմում է դատարանին, ջուր է խնդրում, արտասուքը աչքերին հաւատացնում է, որ արտը այրվում է, հող է ցանել, վարել, ջրել է, իսկ այժմ նրա դրացին բռնի կերպով խլել է նրա արտը, աղաչում է շուտ քննել գործը, որովհետև ժամանակը անվերադառնալի է, ձմեռ է գալիս և այդ խնդրի լուծումից է կախված նրա այս տարվայ կեանքի ապահովութիւնը.... Բայց նախ քան գործը քննել տալը պէտք է գործը նշանակել տալ, ժամանակ, օր որոշել գործը նայելու համար,—մի իրաւունք, որ ամբողջապէս դրադրին է յանձնված, որին և պէտք է, գիւղացու տերմինօլոգիայով խօսելով, տեսնել, այսինքն սկզբնական կաշառք տալ որ գործը նշանակէ։ Գալիս է գործի նայելու օրը և ամենը, մեծ մասամբ, ի հարկէ, նա է, որը կամ խնամութիւն ունի դատաւորներից մէկի հետ, կամ որի թուրը, ինչպէս ասում են, աւելի կըտրուկ է..... Անբաւական կողմը, եթէ ժամանակը և միջոցները ներում են միայն, բողոքում է շինական դատարանի այդ վճռի դէմ մի դանդատ ներկայացնելով, ուր հարկն է։ Դիւանատներում գործը ամիսներով մնալով, գիւղացու դանդատը կամ առանց հեռանքի են թողնում, որովհետև դանդատի ժամանակը անցած է լինում և շինական դատարանի վճիռը իր ոյժը ստացած, կամ գործը վերադարձնում են շինական դատարանին նորից նայելու համար և այդպիսով գործը այլ և այլ արուեստօրէն ստեղծված պատճառներ գործելով, ինքն ըստ ինքեան վերջանում է, որովհետև գիւղացին հրաժարվում է ամեն բանից և աղաչում է միայն իրան հանգիստ թողնել։ Գործը վճռված է, օրինակ, յունվարի մէկին, շինական դատարանի այդ վճռի դէմ բողոքելու համար անբաւական կողմը իրաւունք ունի մէկ ամսվայ ընթացքում դանդատ ներկայացնել ուր հարկն է։ Գանդատը առաջարկվում է իր ժամանակին, բայց նրան թողնում են առանց հետևանքի, որովհետև շինական դատարանի արձանագրութեան համաձայն այդ գործը վճռվել է սեպտեմբերը 29-ին, օրինակ... Գործի վճռելու թիւը փոխել և այդպիսով զրկել ողորմելուն նրա միակ միջոցից արդարութեան փնտրելու համար մի չատ հասարակ, սովորական բան է շինական դատարանների պրակտիկայի մէջ և կազմում է նրանց օրինագրքի գլխաւոր statut-ը։

Ինչպէս ասեցինք, փոքրագոյն դանդատի ամբողջ խնդիրը կայանում է գործին որքան կարելի է շուտ լուծումն տալում։ Սպասել, իրաւաբանական հազար ու մէկ եղէջների հետից ընկնել և այլն, գիւղացին ոչ ժամանակ ունի, ոչ էլ միջոց, փող։ Այդպիսով շինական դատարանի հաղարաւոր վճիռներ անբողոք են մնում, որովհետև գիւղացու համար արժան և արագ դատավարութիւն է պէտք, իսկ բողոքել նրա համար, ծախքերի տակ մտնել կը նշանակէ և վերջում ոչ մի նպատակի, ինչպէս ցոյց տուեցինք, չը հասնել։

Ինչպէս ասեցինք, հաղարաւոր գործեր են ծագում շինական դատարանում և չենք սխալվի եթէ ասելու լինենք, որ հարիւր վճռից տասն է բարեխիղճ լինում, բայց և այնպէս, մեր այստեղ բերած պատճառներով, նրանց մեծ մասը անբողոք է մնում։ Որպէս ապացոյց մեր ասածների, ընթերցողի թոյլատրութեամբ, կը բերենք այստեղ մի փոքրիկ ցուցակ շինական դատարանների վճիռների դէմ ներկայացրած դանդատների թիւ։

Քութայիսի նահանգ	.....	1447
Դանձակի —	.....	467
Թիֆլիսի —	.....	456
Երևանի —	.....	256
Բաքուի —	.....	243

Այդ դանդատները առաջարկվել են շինական դատարանների վճիռների դէմ 1882 թուին։

Անկասկած, ի հարկէ, որ գործերի այդ դրութիւնը ստեղծում է գիւղացու մէջ այն համոզմունքը, որ շինական դատարանում քննվող գործի եզրը կախված է ոյժից։ Այդ այդպէս լինելուց յետոյ, իր ոտնակոխ եղած իրաւունքները, պատիւը վերականգնելու, պաշտպանելու համար նա պէտք է դիմի հաշտարար դատաւորին, ուրեմն պէտք է տասնեակ վերստեր անի, դայ դատարանը, ամիսներով սպասէ իր գործի հերթին, իսկ այդ բոլորի համար ժամանակ և փող է հարկաւոր։ Այդպիսով գործերի այդ տեսակ անաջող դասաւորութիւններից, գիւղացին ստիպված է այս կամ այն վէճը, դատը վճռելու համար դիմել իր սեփական ոյժին և այդպիսով առաջ բերել այն միլիոնաւոր քրէական գործերը, որոնք ծանրաբեռնում են մեր դատարանները և մեր երկիրը, օտարների աչքում մի ասպետական, քաջալերական աշխարհ դարձնում։ Թէ որքան ծանր է գիւղացու համար տանել դատարաններում պահանջվող ծախքերը, ընթերցողը կարող է տեսնել հետևեալ

*) Ходатайство главноначальствующаго гражданскою частью на Кавказѣ въ Министерство юстиціи отъ 14 января 1884 года № 12.

էջ բ, սիւնակ ա. տող 11 տպված է մայրեու, պէտք է լինի մայրենի։ Նոյն համարի, էջ բ. սիւնակ բ. տող 5 տպված է սաֆիլէ, պէտք է լինի սաքիլէ։ Նոյն տեղ, տող 7, տպված է՝ Ե (u), պէտք է լինի Ե (tt)։ Նոյն տեղ տող 22 և 25 տպված է Տ. և Գ. պէտք է լինի Դ. և Գ. Նոյն համարի էջ բ., սիւնակ գ., տող 2 և 3 տպված է Փ., պէտք է լինի Գ. Ծանօթութեան մէջ տպված է oreil, պէտք է լինի oreille.

№ 22, էջ ա, սիւնակ բ, տող 7 տպված է միակ, պէտք է լինի մինակ։

Իմ յօդուածի մէջ «Մշակը» բաց է թողել տաճկական գրերով գրված բառերը, երևի Թիֆլիսի գրաշարների մէջ դժուար էր գտնել այդ լեզուով շարողներին, կամ գուցէ չը կար այդ լեզուին հմուտ մի սրբագրող։

Ընդունեցէք և այլն։

Առաքել Սարուխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ՄՕՍԿՎԱՑԻՑ որ մեր յայտնի բանաստեղծ Սմբատ Շահազիզի նախկին աշակերտները և նրա այժմեան ուսանողները դիտաւորութիւն ունեն տօնել շուտով, թէև ամենահամեստ կերպով նրա մանկավարժական և գրական գործունէութեան 25-ամեակը։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Այստեղի հայ եկեղեցու երեցփոխան Մէլքոն փանեանց թողնում է իր պաշտօնը և վերադառնում է իր հայրենիքը։ Նա ազուլեցի է։ Պարոնը արդէն հրաժարական է տուել իր պաշտօնից։ Փանեանց 47 տարի Մօսկվայումն է և 19 տարի երեցփոխան է այստեղի եկեղեցում։ Կանոնաւոր ուսում չը-ստացած մարդ, իր բնական խելքի, իր կատարեալ ազնուութեան շնորհով նա մի տեսակ ներքին ազդմամբ հակում էր զգում միշտ դէպի ամենաբնիւը և բարձրը. նա գրասէր է և կազմած ունի մի գեղեցիկ գրադարան, նա բարեկամ, գործակից և համակրող է եղել հանգուցեալ Ստեփաննոս Նազարեանցին, նա ընթերցանութեամբ իր ուման պակասը լրացնելով, աւելի առողջ դատողութեան տէր մարդ է, քան շատերը, որոնք բարձրագոյն ուսում են ստացել։ Փանեանցի գրադարանը շատ ընտիր է. ասում են Մոսկվա թողնելու պատճառով պարոնը կամենում է նը-րան ծախել։ Ցանկալի կը լինէր որ այդ գրադարանն առնվէր և Թիֆլիսում Նրանից կազմվի մի որ և է գրադարանի կամ ընթերցարանի հայոց բաժանմունք։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մարտի 2-ին կայացաւ պ. Թաղիեվի թատրոնում տիկին Գոհարիկի, պ.պ. Կիւրեղեանի և Աբէլեանի երկրորդ «վերջին երեկոյթը։ Երեկոյթի ծրագիրը կազմված էր զանազան խառնուրդից։ Դրա մէջ մանում էին զանազան երգեր, ոտանաւորներ, ծիծաղաշարժ պիէսներից տեսարաններ, «Համլէտից» Օֆէլիայի խելագարութեան տեսարանը և այլն։ Պ. Կիւրեղեանի երգած կուպլեները և ասած ոտանաւորները անաջող էին, որովհետև պարոնը չունի դրա համար լաւ արտասանութիւն և ձայն. նա աւելի աջողութիւն դտաւ վոդեվիլներում։ Աբէլեան ընդհանրապէս վատ չը կատարեց իր դերերը։ Տ. Գոհարիկի երգը գեղեցիկ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա. տիկինը լաւ կատարեց և Օֆէլիայի դերը. հասարակութիւնը վարձատրեց նրան բուռն ծափահարութիւններով։ Անցեալ անգամ թատրոնը գրեթէ դատարկ էր, իսկ այս անգամ կիսով չափ լի էր։ Այ՛ երեկոյթից յետոյ տ. Գոհարիկը և պ.պ. Կիւրեղեան ու Աբէլեան կրկին ճանապարհ ընկան դէպի Թիֆլիս։»

—

ԹԻՖԼԻՍԻ ջրանցքը չինելու պատճառով հասարակ մշակների վարձը զգալի կերպով բարձրացաւ։ Այն փողոցները, ուր փորում են հողը՝ ջրանցքի խողովակները դարսելու համար, այժմ կատարելապէս աւերված դրութեան մէջ են և գիշերով անցնողների համար ներկայացնում են մի տեսակ որոգայթներ, որովհետև քաղաքային վարչութիւնը իրան նեղութիւն էլ չէ տալիս լապտերներով լուսաւորել փորած խոր փոսերի չորս կողմը։

—

Ստացանք Գիւտ քահանայ Աղանեանից նրա կազմած «Կրօնի դասագիրքը։» Այդ դասագիրքը, ինչպէս գրված է թէ «Աղդի» մէջ և թէ գրքի կազմի վրա, նշանակվում է հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների երկրորդ տարվայ դասընթացի համար, «համաձայն հաստատված ծրագրի։» Այդ «Կրօնի դասագիրքը» բաղկացած է երկու մասից. առաջին մասի մէջ զետեղված են հօթ հատ աղօթքներ, գրաբար լեզուով, իսկ երկրորդ մասում՝ աշխարհաբար լեզուով տաս գլուխ՝ Քրիստոսի մասին, տօների բացատրութիւններով հանդերձ։ Թէ ինչպէս պէտք է առանդվի երկրորդ տարվայ աշակերտներին այդ գրքոյկը,— այդ միանդամայն անհասկանալի է։ Երկրորդ մասի նիւթերի մէջ դասագրքի կազմողը փորձ է փորձել չը հետևել կրօնի դասատուութեան սխոլաստիական մի քանի ձևերին, փորձ է փորձել մատչելի դարձնել նիւթը երեխաների համար, բայց, տարաբաղդաբար այդ Նրան չէ աջողվել։ Լեզուն և ոճը՝ իբրև դասագրքի լեզու և ոճ՝ չատ անյարմար են։ Այդպիսի լեզուով և ոճով կարելի է կրօնական յօդուածներ գրել, բայց դասագրքեր կազմել և հրատարակել չէ կարելի։ «Կրօնի դասագիրքը» պատկերազարդ է, բայց պատկերները անաջող են։ Տիպը միջակ է, գրքի թուղթը երկու տեսակ է։ Դասագիրքը բաղկացած է 54 երեսից, տպված է Ներկայ 1887 թվին Մարտիրոսեանի տպարանում։ Գինն է 25 կոպ.

—

Նորերումս Կրօնչտադտում պրոֆէսօր Մենդէլէեվ երկու դասախօսութիւն կարդաց նաւթի և նրա գործածութեան մասին։ Մանրամասնաբար խօսելով նաւթային հարցի մասին, դասախօսը յայտնեց որ ինքը մեծ ապագայ է գուշակում մեր նաւթային գործին։ Պրոֆէսօրը, ինչպէս հաղորդում են Մօսկվայի լրագիրները, այն միտքը յայտնեց, որ անհրաժեշտ է նաւթանցք անցկացնել դէպի Սև ծովի ափերը։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ շուտով պետական խորհուրդը կը սկսի քննել Կովկասեան կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովի նախագծերը, որոնց նպատակն է զարգացնել Կովկասի գինեգործութիւնը, ծխախոտագործութիւնը, ջերմապահութիւնը և նաւթային արդիւնաբերութիւնը։

—

Ստացանք Խորէն վ. Սաւչանէի խմբագրութեամբ հրատարակվող «Մանկավարժանոց» ամսագրի ներկայ տարվայ № 1։ «Մանկավարժանոցը» այժմ տպվում է Պետերբուրգում։

—

Կ. Պոլսում սկսեց հրատարակվել մի նոր ամսագիր՝ «Ցնտես» անունով, խմբագրութեամբ Ս. Տէմիրճիպաշեանի։ Բաժանորդագինն է տարեկան 10 դահեկան, կէս տարվանը՝ 5 դահեկան։ Մեզ ուղարկված են այդ ամսագրի առաջին չորս համարները։ Ինչպէս երևում է Պոլսի գրականագէտ-բանաստեղծները տնտեսականութիւնը այնպէս են հասկանում, ինչպէս և իմաստասիրական. շարժումները։ Կը փորձենք այս ամսագրի մասին էլ քանի մի խօսք ասելու, Պոլսի հայոց մամուլի ինչ լինելը աւելի պարզ ցոյց տալու համար։

—

Այս օրերս կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ Աւագ խան Մէլիք-Մեհրաբեանցի այրին՝ Բարբարէ Ցովսէփեան Մէլիք-Մեհրաբեանց, 75 տարեկան հասակում։ Հանգուցեալ տիկնոջ մարդու մասին «Արձագանք» շաբաթաթերթը գրում է հետևեալը։ «Հանգուցեալ Աւագ խանը նշանաւոր դեր է խաղացել իր ժամանակին Իբրև ռուսաց կայսերական հիւպատոսարանի պաշտօնեայ Պարսկաստանում, մեծամեծ ծառայութիւններ մատուցանելով ռուսաց տէրութեանը և մի և նոյն ժամանակ վայելելով պարսից շահերի բարեհաճութիւնը, որոնք ի միջի այլոց շնորհել են նրան ժառանգական խանի տիտղոսը։ Աւագ խանը մի յիշատակարան ունէր, ուր արձանագրված են այն նշանաւոր եղելութիւնները, որոնք տեղի են ունեցել 26 տարիների երկար շրջանում՝ 1827 թվից մինչև 1853

բանից։ Երբ քաղաքացիական գործ սկսելու համար որոշվեց յայտնի վճար (судебн. пошлины) տալ—մի միջոց, որով հեռատես իրաւաբանները երևի կամենում էին սահմանափակել անթիւ քաղաքացիական գործերի թիւը, գիւղացին, որ այդ տեսակ դէպքերում կարծես թէ աւելի հնարագէտ է գտնվում, դիմում է այդպիսի մի բանի. քաղաքացիական գործ սկսելու հետ ի միասին, նոյն անձնաւորութեան դէմ, նա մի քրէական գործ է սկսում, իսկ երբ քրէական գործը կցվում է քաղաքացիականի հետ, վերջինը աղատվում է այն վճարից, որի մասին մենք յիշեցինք։ Այդպիսով, ինչպէս ընթերցողը տեսնում է, գիւղացին ազատվում է նրան այնքան ծանրացնող վճարից, թէև գործում է մի ծանր բարոյական յանցանք։

Անցնելով այժմ չինական տանուտէրի կոչման ու նշանակութեան խնդրին գիւղական հասարակութեան մէջ, պէտք է ասենք, որ չինական տանուտէրի դերը գիւղում, տարիների ընթացքում, տեղական կեանքի պայմանների յայտնի դասաւորութեան շնորհով, աւելի ծանր է, քան թէ չինական դատարանի դերը։ Չինական տանուտէրը իրաւաբանօրէն թէև չինական դատարանի հրամանը կատարողն է միայն, բայց իսկապէս դուք կը տեսնէք նրան ամեն գործի մէջ միջամտելիս։

Չինական տանուտէրի ընտրութիւնը, մանաւանդ՝ այն գիւղական հասարակութիւնների մէջ, որոնք գաւառի կենտրոնն են համարվում, ինչպէս և միրաբի, ջրպետի ընտրութիւնը մի դարագլուխ է կազմում գաւառական կեանքում։

Ընտրութիւնից մի քանի ամիս առաջ արդէն գիւղերի մէջ իրարանցում է տիրում. գիւղը միշտ խուլ, մեռած դրութիւնից յանկարծ սթափվում է, ոտի կանգնում, սկսում են բորբոքվել և ըստ երևոյթին գոյութիւն չունեցող կրքերը, չօբանը (հովիւը) ու վաչխառուն (кулакъ), որոնք մինչև այդ օրը ոչինչ յարաբերութիւն չունէին իրար հետ, այժմ սկսում են վիճել։ Հարիւրաւոր մարդիկ, գիւղական այս կամ այն կուսակցութեան պատկանող, սկսում են շրջել գիւղերը ամեն տեսակ հնարագիտութիւն գործ դնելով ձայներ գրաւելու համար։ Պէտք է գիտենալ, որ գաւառական նշանաւոր կուսակցութիւնները, որոնք իսկապէս ղեկավարում են գաւառում բոլոր հասարակական գործերը, միշտ այլ և այլ դրամական հաշիւներ ունեն գիւղացիների հետ և այդ հաշիւները նրանց ձեռքում ամենալաւ զէնք են այս կամ այն մարդու կանդիդատուրան աջողացնելու, գործը գլուխ բերելու համար։ Այդ ընտրութիւնները վերին աստիճանի աղմկալից են լինում և ընտրութիւնից մի քանի ամիս առաջ ու յետոյ լարված դրութեան մէջ են պահում գիւղական հասարակութեան կրքերը և առատ նիւթ մատակարարում չինական շրջաններում խօսակցութեան համար։ Տանուտէրի ընտրութիւնը, որ լինում է գաւառապետի, կամ նրա օգնականներից մէկի նախագահութեամբ, այն աստիճան փոթորկալից, մրրկալից է լինում, որ ոչ տատնեաւ զաղափարների մտրակները, ոչ էլ նախագահի խլացնող ձայնը ոչինչ չեն կարողանում օգնել։ Կուսակիցների եռանդը իրանց կանդիդատին անցկացնելու համար երբեմն մինչև այն աստիճանին է հասնում, որ դոցանից մի քանիսը մէկ քարի տեղ, անհնարելի կերպով, երկու—երեքն են ձգում և այդպիսով ի հարկէ, ընտրութիւնը միայն երկարացնում, որովհետև և ձայների թիւը արդէն յայտնի լինելով, նախագահը նկատում է անճշդութիւնը և ընտրութիւնը անվաւէր համարելով նորից է քուէարկում այդ անձնաւորութիւնը։

Երբ դուք, ընթերցող, որպէս պատահական ճանապարհորդ, այս տեղերը կարդալուց յետոյ, կը պատահիք Անդրկովկասի գիւղերից մէկում մի միաժամ տանուտէրի, որի ընտրութեան համար այնպէս ագիտացիա էր վարում հասարակութիւնը, գուցէ զարմանաք, որ մի տամեակ գիւղերի ղեկը յանձնված է այնպիսի մի մարդու, որ բացի ի դէալական միամտութիւնից ոչինչ չէ ներկայացնում իրանով, դուք գուցէ զարմանաք, ասում ենք, որ մի մարդ, որ ոչ խելք, ոչ ճարպիկ, ոչ էլ հարուստ լինելով կարողացել է դրաւել իր կողմը ձայների մեծամասնութիւնը և գիւղական հասարակական վարչութեան գլուխ կանգնել։ Պէտք է ասել, որ չինական տանուտէրի պաշտօնը, որքան որ չահաւէտ է կաշառակերի համար, այնքան էլ ծանր է, և այդ է պատճառը, որ շատ անգամ դաւառական յայտնի կուսակցութիւնների ներկայացուցիչները, որոնք այնքան, եթէ այսպէս կարելի է ասել, յեղափոխում են գիւղական կեանքը չինական տանուտէրերի ընտրութեան ժամանակ, իրանք խոյս են տալիս այդ պաշտօնի վրա ընտրվելուց և սկսում են առաջ մղել դէպի հասարակական գործը բոլորովին անտարբեր, թոյլ, ազդեցութեան տակ ընկնող մարդու կանդիդատուրան։ Ընտրել տալով այդպիսի մի մարդ, կուսակցութեան ներկայացուցիչը բոլորովին հպատակեցնում է նրան իր պահանջներին և իր նըպատակներին համնում է շատ անգամ աւելի յաջող, քան թէ եթէ ինքը տանուտէր լինէր, որովհետև տանուտէրի գործունէութիւնը շատ անգամ կապված է լինում օրէնքի առջև շատ ծանր պատասխանատուութեան հետ, պատասխանատուութիւն, որ քրէական բնաւորութիւն ունի։

Բայց կան և այնպիսի տեղեր, ուր գիւղացին, չը նայելով իրան բոլոր անաջող շրջապատող կեանքի պայմաններին, վերապահում է իրան իր ձայնը և հասարակական պաշտօնների վրա այնպիսի մարդիկ ընտրում, որոնք պատիւ են բերում նրանց ընտրողներին։ Այդ տեսակ տեղերին պատկանում են գլխաւորապէս լեռնային երկիրները, որտեղ գիւղական հասարակութիւնը, համեմատաբար, համ հարուստ է, համ էլ, տեղագրական պայմանների շնորհիւ երևի, աւելի եսասէր է ու մի փոքր էլ ազատ ապրելու հակված....

Այդ տեսակ գիւղերից մէկն է և մեր յայտնի պատմական Կողպ։ *) Անկասկած, ի հարկէ, որ այդ տեսակ գիւղերումն էլ, որքան և բարձր լինէր նրանց բնակիչների բարոյականութիւնը, կը գտնվեն անհատներ, որոնք ժամանակ առ ժամանակ կալեկոծեն նրանց կեանքի հարթ ընթացքը։ Այդ տեսակ անձնաւորութիւնները կազմում են այդ գիւղերում գիւղական վարչութեան օպոզիցիան, հակառակ բանակը և ամեն մի քայլափոխում նորա համար որոգայթներ լարելով ստիպում են բարեխիղճ չինական վարչութեան անդամներին հրաժարվել պաշտօնից։ Այդ է պատճառը, որ այդ տեսակ մարդիկ չեն կարողանում երկար իրանց ձեռքում պահել գիւղի վարչական ղեկը. նոքա ակամայ են յանձն առնում հասարակական պաշտօնը և դէպքի են սպասում նորանից հրաժարվելու։

Երբ գիւղական հասարակական ժողովը մի հարց է վճռում, այդ վճիռը տանուտէրը արձանագրում է և երբ հասարակութիւնը ստորագրում է թերթը, նա կնիքով վաւերացնում է այդ։ Մենք անձամբ գիտենք դէպքեր, երբ մի գիւղական հասարակութիւն, հասարակական ժողով կազմելով, որոշել է իրանց չքաւոր համագիւղացի մի ընդունակ մանուկ ուղարկել Անդրկովկասի մի յայտնի ազգային դպրոց, չինական տանուտէրը այն ժամանակ է վաւերացրել հասարակական ժողովում կազմված թերթը, երբ տղայի ազգականները մի զլուխ շաքար են մատուցանել նորան։ Մենք գիտեմ, օրինակի համար, հաղարաւոր դէպքերից այս դէպքը բերեցինք, ընթերցողին ցոյց տալու համար, որ եթէ տանուտէրը այնպիսի դէպքերում, որոնք այս կամ այն չափով յայտնի են արդէն գիւղական հասարակութեանը, յանդգնում է կաշառք առնել, ուրեմն ինչ է անում նա այն դէպքերում, երբ գործ է ունենում ոչ թէ մի ամբողջ հասարակութեան հետ, այլ մի անհատի.....

Թէև այստեղ մի առ մի այն բոլոր միջոցները, որոնցով չինական տանուտէրը ծծում է գիւղացու արիւն-քրտինքով աշխատածը—մեզ շատ հեռու կը տանէր և մենք բաւականանում ենք աւելացնելով մեր չինական տանուտէրի մասին արած խորհրդածութիւններին, որ չինական տանուտէրը իր ներկայ դրութեամբ մի հրէշ է գաւառական կեանքում, որի նպատակն է կեղեքել, հարստահարել, և աչ ու ձախ հնձել....

Մի այլ անգամ, երբ մենք պատիւ կունենաք խօսել «Մշակում», մեր նամակների մէջ, գաւառական ինտելիգենցիայի մասին, մենք յոյս ունենք նորից վերադառնալու չինական տանուտէրի խնդրին և նորա հասարակական գործունէութեանը գիւղում։ Իսկ թէ ինչ տուեց մեր երկրին չինական բեֆորմը, որի արտադրութիւնն է մեր նկարագրած չինական դատարանը ու չինական տանուտէրը—ընթերցողին ենք թողնում ասելու. փաստերը մանրամասն կրիտիկայից ազդու են *)։

Երևան. Ստ. Ղորդանեան

---

*) Մեր շնորհակալութիւնն ենք յայտնում մեր բարեկամ Հմայակ վարդապետ Արշարունուն, որ օգնեց մեզ այս յօդուածը կազմելիս։

*) Հարկաւոր ենք համարում աւելացնել այստեղ, որ այժմ, գլխաւորապէս վերջին ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, Կողպի հասարակութիւնը չօչափելի կերպով աղքատացել է։

թիւը։ Նրա ամուսինը պահած է այդ դանձը, իբրև սրբութիւն, որ այժմ ժառանգները մատրութիւն ունեն ի լոյս ընծայել։» Աւագ Խանի այրիի յուղարկաւորութեան հանդէսը կատարվեցաւ այս մարտի 7-ին, շաբաթ օրը։ Յեղարկաւորութեանը ներկայ էր Թիֆլիսի ընտիր, բազմաթիւ հասարակութիւն։

—

Մարտի 6-ին, Կոլգասնա Դ-ղ...ական ընկերութեան ընդհանուր ժողովում, պ. Դինգելշտետ կարդաց մի զեկուցում, «Թէյի մշակութեան մասին Արևելեան-Հնդկաստանում, և Թէյի մշակութեան կարելիութեան մասին Անդրկովկասում»։ Նիստը բաւական բազմամարդ էր։ Պ. զեկուցանողը իր զեկուցման մէջ այն միտքը յայտնեց, որ Թէյի մշակութիւնը անկարելի է Անդրկովկասում։ Ժողովականները այդ կէտի վերաբերութեամբ չը համաձայնեցին զեկուցանողի հետ, այդ բանը ապացուցված չը համարելով, ուստի և ընկերութիւնը պէտք է շարունակի ուշադրութիւն դարձնել Թէյի մշակութեան վրա Անդրկովկասում, որի համար դեռ անցեալ տարի դիմել է կառավարութեանը՝ խնդրելով ուղարկել Անդրկովկաս մի մասնագէտ այդ բոյսի մշակութեան փորձերը անելու համար։ Միւս անգամ կը հաղորդենք այդ հարցին վերաբերեալ քանի մի մանրամասնութիւններ։

—

Մարտի 7-ին, Առևտրական կլուբի դահլիճում, նախկին Արշակունու տանը, դիմակահանդէս տրվեցաւ Թիֆլիսի Ալէքսանդրեան ապաստարանի օգտին։ Դիմակահանդէսը բազմամարդ էր, և աչքի էր ընկնում ներկայ եղող հասարակութեան բազմազանութեամբ,—այդտեղ կարելի էր տեսնել Թիֆլիսի մեր կինտոներից, մանրավաճառներից և թուրուխչիներից չատերին, կայլն և չատ թուրքեր, բոլորն էլ իրանց սովորական հագուստներով։ Այդ բոլոր անձինք, որոնց անկասկած առաջին անգամն էր պատահում լինել դիմակահանդէսում, չատ զարմացած և ապշած էին իրանց շուրջը կատարվող տեսարաններով։ Կայլն և ինտելիգէնտ շրջանին պատկանող բազմաթիւ անձինք։ Պարահանդէսը տեսեց կէս գիշերից չատ ուշ։

—

Կիրակի, մարտի 8-ին, Թիֆլիսի Սօլօլակ կոչված թաղի մի նշանաւոր փողոցում, առաւօտեան 8 ժամին մի կատաղած չուն կծեց 12 տարեկան մի երեխայի աջ ուսից, և ապա մի քանի ուրիշներին։ Վիրաւորվածներին տարան ոստիկանատուն և արձանագրութիւն կազմեցին։ Իսկ չանը, սպանելուց յետոյ, տարան բժշկական քննութեան ենթարկելու։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Ունգարական պատգամաւորների մարտի 5-ի ժողովում քննվեցաւ չորս միացեալ յանձնաժողովների զեկուցումը, որը վերաբերում էր $52^1/_2$ միլիոն գուլդէն փոխառութեանը՝ պետական զինուորական այժը մեծացնելու համար։ Յանձնաժողովը այն միտքը յայտնեց, որ, յիրաւի, Աւստրօ-Ունգարիայի ներկայ տնտեսական վիճակը այնպիսի անհանգստանալի դրութեան մէջ է, որ զգալի է այդպիսի մի գումարի զինուորական ծախքերի համար յատկացնելը. բայց և այնպէս յանձնաժողովը միաձայն հաստատեց և ընդունեց այդ բանը, որպէս զի կայսրութիւնը պատրաստ լինի ամեն տեսակ պատահմունքների համար և յոյս պէտք է ունենալ, որ բոլոր կուսակցութեան պատգամաւորները հայրենիքի պաշտպանութեան և պատուի հարցում միաձայն և միակամ վճիռ կը կայացնեն։ Յանձնաժողովի այդ մտքերը համակրութեան նշաններով ընդունվեցան պատգամաւորների ժողովի կողմից։ Պատերազմական մինիստրը ներկայացրեց մի մանրամասն զեկուցում զինուորական այժի մասին։ Պատերազմական մինիստրի զեկուցման առիթով մեծ համակրութեամբ խօսեց կոմս Ապպօնի, և ի միջի այլոց ասաց. «Յարգելի պատգամաւորներ. այդպիսի մի մեծ փոխառութիւն անելու համար, այն էլ այնպիսի ծանր պայմաններում, պէտք է որ լինի մի մեծ նպատակ և մի յարգելի պատճառ։ Այդ յարգելի պատճառը եւրոպական խաղաղութեան անապահով դրութիւնն է. եւրոպական խաղաղութիւնը չատ երերուն է դարձել, քանի որ արևելեան և արևմտեան կենտրոնական հարցերը միատին են հանդէս եկել։ Քաղաքական դրութիւնը չատ վտանգաւոր կերպարանք ունի.—բոլղարական հարցը դեռ չէ կորցրել իր վտանգաւոր բնաւորութիւնը։ Մեր քաղաքականութիւնը պ ա շ տ պ ա ն ո ղ ա կ ա ն բնաւորութիւն ունի. սակայն ես ձեզ պէտք է ասեմ, որ պաշտպանողական դիրք պէտք է բռնել ոչ թէ միայն այն դէպքում, երբ թշնամին մտնում է պետութեան սահմանների մէջ, այլ և այն դէպքում, երբ կազմակերպվում են այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են վտանգ սպառնալ պետութեան ապահովութեանը։ Բալկանեան թերակղզու վրա լինելի մի որ և է փոփոխութիւն պէտք է մեզ ասպարէզ դուրս բերի։ Մեր շահերը թոյլ չեն տալիս, որ Բալկանի վրա հաստատվի դերիշխանութիւն մի որ և է կողմից. այդ քաղաքականութիւնը մենք վաղուց յայտնել ենք. դրանից չեղվել մենք չենք կարող»։ Պատգամաւորները յայտնեցին իրանց համերաշխութիւնը կոմս Ապպօնիի խօսքերի վերաբերմամբ։ Պատգամաւոր Բեիտի ցանկութիւն յայտնեց, որ Աւստրօ-Ունգարիան աւելի որոշ քաղաքականութիւն պէտք է ունենայ, և պէտք է խաղաղութիւնը աւելի հաստատ հիմքի վրա դնէ. «այժմեան խաղաղութիւնը խաղաղութիւն չէ, այլ մի ի ւ ղ ի ա է», աւելացրեց Բեիտի, վերջացնելով իր ճառը։ Ժողովի մէջ խօսեց կոմս Անդրաշի հրաւիրելով պատգամաւորներին աջակցել մինիստրութեանը՝ պետութեան անունը և այժը մեծացնելու համար այսպիսի տ ա տ ա ն վ ո ղ դրութեան ժամանակ։—«Ես կարծում եմ, ասաց Անդրաշի, որ մենք այժմ գտնվում ենք այդպիսի դրութեան մէջ։ Ես համոզված եմ, որ վտանգաւոր բոպէներում պատգամաւորութիւնը միմիայն հայրենասիրական մի ցանկութիւն կունենայ,—առանց մանրակրկիտ լինելու՝ տալ կառավարութեան այժ և միջոց։ Ես անձամբ այն կարծիքի եմ, որ կարելի է խաղաղութիւնը պահպանել, եթէ հարկաւոր միջոցները գործ դնվին։ Ինչ և իցէ ուրախալի է միանգամայն, որ ինչպէս յայտնեց պատերազմական մինիստրը, աւստրօ-ունգարական զօրքը այժմ աւելի քան երբ և իցէ պատրաստ դրութեան մէջ է. ես ճանաչում եմ պատերազմական մինիստրին իրրև իմ ընկերոջ, և համոզված եմ, որ նրա խօսքերը իրական ճշմարտութիւններ են պարունակում»։ Մինիստր-նախագահ Տիսսա յայտնեց, որ ինքը յոյս ունի, թէ այդ փոխառութիւնը վերջինը կը լինի. «Բայց և այնպէս, ասաց Տիսսա, երբ մեր յոյսը չի արդարանայ, մենք ամենքս պատրաստ կը լինենք ամեն բան զոհել երկրի պաշտպանութեան համար»։ Այդ խօսքերը ընդունվեցան բուռն համակրութեամբ և ժողովը հաստատեց փոխառութեան առաջարկութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սուէզի ջրանցքի չինող ֆրանսիացի յայտնի Լէսէպս այս օրերս եկաւ Բերլին։ Բերլինից հեռագրում են, որ Լէսէպսի գալը քաղաքական նշանակութիւն ունի։ Կարծում են որ նա կարող կը լինի նպաստել Ֆրանս-գերմանական յարաբերութիւնների լաւանալուն։

—Բերլինից հեռագրում են, որ Վիլհէլմ կայսրը մտադրութիւն ունի, իր ծննդեան տօնի օրը թողնել իշխանութիւնը, և հրաժարվել իր գահից։

—Գահիրէից հեռագրում են անգլիական լրագրիներին, որ 'ի նկատի ունենալով երկրի ֆինանսական նեղ և անտանելի դրութիւնը, խեդիվը վճռել է նուիրել պետութեանը իր ռեալական բոլոր պալատները, բացի երկուսից։ Հազիւ թէ դրանով կարելի լինի ֆինանսական ճգնաժամի առաջն առնել։

—Բ. Դուռը արգելել է ձիաներ դուրս տանել դէպի Սերբիա։

—Լոնդոնի լրագիրներին Բերլինից հեռագրում են, որ Բիսմարկ խօսելով այժմեան քաղաքական դրութեան մասին, ասեց հետևեալը։ «Բուն պատերազմական տեսակէտից նայելով հարցի վրա, պէտք է ասել, որ այժմ ամենայարմար բոպէն է պատերազմ սկսելու, բայց այդ չի համապատասխանի քաղաքական հեռատեսութեանը, որովհետև մենք 'ի նկատի պէտք է ունենանք և այն հետևանքները, որոնք կարող են առաջ գալ, եթէ մենք չունենանք մեր ցանկացած աջողութիւնը։ Այն ժամանակ մենք երկու կրակի մէջ կը լինենք. մի կողմից մեղաւոր կը լինենք բարոյապէս այն պատճառով, որ պատերազմ սկսեցինք, և միւս կողմից՝ անտանելի կը լինի յաղթվելու սարսափելի ամօթը։ Այդպիսի վտանգի մենք ենթակայ կերպով չենք կամենում ենթարկվել։»

—Սոֆիայից հեռագրում են, որ բոլղարական խնամակալութիւնը զօրակոչ է արել Արևելեան-Բումելիայում, զէնքի հրաւիրելով 20—40 տարեկաններին։

—Իտալական կառավարութիւնը մտադիր է 100 միլիոն ֆրանկի պետական փոխառութիւն անել։

—Սեցիլիայում երևեցաւ խօլերա. ձեռք են առնվել միջոցներ։ Կատանիայում քաղաքային վարչութիւնը, զանազան ընկերութիւններ, բժշկական ֆակուլտետի ուսանողները, զանազան բժշկական յանձնաժողովներ՝ սկսել են օգնութիւն ցոյց տալ հիւանդներին։ Առաջարկված է արձակել ուսումնարանների աշակերտներին։

—Փարիզից գրում են իբրև հաստատ իրողութիւն, որ Իտալիան ոչինչ դաշնակցութիւն չէ կապել Գերմանիայի և Աւստրիայի հետ։

—Գաղտնի և աղատամիտ-հերձուածողների մէջ բանակցութիւններ նորից սկսվեցան, հաշտութիւն կայացնելու դիտաւորութեամբ։

—Պօլսից հեռագրում են, որ Բ. Դուռը հրամայեց Ռիղա-բէյին, աշխատել համաձայնութիւն կայացնել բոլղարական խնամակալութեան հետ։

—Բուխարեստից գրում են, որ Բոլղարիայում մահուան պատժի ենթարկված զինուորականներից մի քանիսների կանայքը եկան այդտեղ։

—Ցակոմը-փաշայի փոխարէն, թիւրքաց ֆինանսների մինիստր նշանակվեցաւ Զուիդի-փաշան։

—Մարտի 4-ին, (փետրվարի 20-ին) Փարիզի Աշխարհագրական ընկերութեան ժողովում, պ. Ժան Բրուսալի կարդաց մի զեկուցում հայերի և Հայաստանի մասին (l'Arménie et les Arméniens). Ֆրանսիական «Temps» լրագիրը տվել է մի փոքրիկ նկատողութիւն պ. Բրուսալիի զեկուցման մասին, և տարածել է լրագրի հետ մի թերթ, որի մէջ կարճառօտ քաղվածք է արած զեկուցումից։ Պ. Բրուսալի հայոց պատմութիւնը կարճառօտ պատմելուց, և հայոց աշխարհագրական դիրքը նկարագրելուց յետոյ, տեղեկութիւններ է տալիս Հայաստանի բնական ամեն տեսակ հարստութիւնների մասին և հրաւիրում է Եւրոպայի ուշադրութիւնը այդ հարստութիւնների վրա։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

1885—1886 ուսումնական տարվայ մէջ Փարիզի համալսարանի ուսանողների թիւը 10,679 էր, որոնցից 3,786 սովորում էին իրաւաբանութիւն, 3,696 բժշկութիւն, 928 լեզուագիտութիւն։ Օտար ուսանողների թիւը այդ տարվայ մէջ հասնում էր 834-ի, ուսանողուհիների թիւը՝ 167-ի։

* * *

1880 թուականին Ռուսաստանում, բամբակի գործարանների թիւը հասնում էր 868-ի, 1882 թուականին—836-ի, 1884 թուականին 801-ի։ 1884 թուականին այդ գործարանների մէջ աշխատող բանուորների թիւը հասնում էր 222,190-ի։ Բամբակի գործարանների մէջ նշանաւոր է Լոդզի քաղաքի Շեյդէր ընկերութեան բամբակեղէնի գործարանը, որը արտադրում է տարեկան 15,348,000 ռուբլու ապրանք, Ս. Մօրոզովի և ընկ., որը արտադրում է տարեկան 8,625,000 ռուբլու ապրանք և այլն։ Կիսապաշտօնական նշանակութիւն ունեցող տեղեկութիւններին նայելով, Կովկասը տալիս է տարեկան 350,000—400,000 պուդ բամբակ։

* * *

Խերսօնի նահանգի մի փոքրիկ քաղաքի հիւանդանոցը փետրվարի 4-ին մտաւ մի ջահել կին, և յայտնեց, որ իր մարդը այն դիշերը կծեց ու պոկեց իր քիթը. բժիշկը իր աչքերով տեսաւ, որ յիրաւի ջահել և գեղեցիկ կնոջ քթի ներքին մասը չը կայ։ Բանից երևեցաւ, որ մարդը, որը միայն երեք ամիս է եղել ամուսնացած, յիրաւի կըծել է կնոջ քիթը և իսկոյն կերել։ Երկու ամուսինների յարաբերութիւնները չատ վատ են եղել։ Քիթ ուտող ամուսինը 20 տարեկան է և արհեստով կօշկակար։

* * *

Բրիւսելում, գլխաւոր թատրոնի վարչութիւնը՝ թատրոնի մուտքի մօտ կախել տուեց հետևեալ յայտարարութիւնը. «Պարտերում, չլեսպայով կարող են նստել միմիայն հասակ առած կանայք»։ Այդ օրից սկսած, հարարեա ոչ մի կին թատրոնում չլեսպայով չէ նստում, որ թէ աւելի գեղեցիկ է, և թէ չէ խանդարում ուրիշներին՝ կանգնելով անգամ չլեսպաների պատճառով՝ տեսնել աղտ կերպով բեմը։

* * *

Մի խումբ ռուսներ Պետերբուրգից ուղարկել են Փարիզ, գեներալ Խուլանժէին մի թանգագին սուր, որի մի կողքի վրա, ի միջի այլոց, գրած է «Qui vives»,—«La France A Boulanger» և մի այլ կողմում «La Russie»։

* * *

Նորերս Վարշավայի շրջակայքում յանկարծակի մեռաւ մի կին։ Մահվան երրորդ օրը նրան տարան եկեղեցի, որպէս զի միւս օրը առաւօտը թաղեն։ Բայց մեծ եղաւ միւս օրը եկեղեցի գնացողների զարմանքը, որոնք մեռած կնոջը տեսան գետնի վրա ընկած,—իսկոյն բժշկներ կանչեցին և յայտնվեցաւ, որ կինը ոչ թէ մեռած է եղել, այլ քնած է եղել լետարգիական քնով։ Երբ կինը արթնացաւ, իսկոյն երևեցաւ որ արդէն խելագարվել է. դագաղը և թաղման բոլոր պարագաները այնպիսի ծանր տպաւորութիւն էին գործել նրա վրա, որ նա իսկոյն խելագարվեցաւ...

* * *

Խօսելով վերջին երկրաշարժների մասին, երևելի աստղագէտ Կամիլ Ֆլամմարիոն ասում է. «Վերջին 25 տարուայ ընթացքում ես մի քանի անգամ առաջարկել եմ փորել մի քանի վերստ խորութեամբ մի հոր՝ երկրագնդի ներսի դրութիւնը իմանալու համար։ Եթէ եւրոպական պետութիւնների զօրքերը այդ բանի վրա աշխատէին, յաղթութիւնը մեծ և օգտակար կը լինէր։ Միացեալ-նահանգների կառավարութիւնը արդէն ձեռնարկել է այդպիսի մի հոր փորելուն, և սկզբից յատկացրել է դրա համար 100,000 դոլլար»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ Երէկ արտակարգ գնացքով Բերլին ուղևորվեցին Մեծ իշխաններ՝ Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր Ամուսնու հետ և Միխաիլ Նիկոլաևվիչ։ Հրատարակված է Բարձրագոյն ուկազ յատկացնելու հողի հարկաւոր տարածութիւն՝ որը պէտք կը լինի երկաթուղի կառուցանելու Բուխարայի սահմանագլխից մինչև Սմրղանդ։ Հրատարակված է պետական խորհրդի կարծիքը՝ բոլոր հետևակ զօրագնդերի կրտսեր սպաների թիւը՝ չատով որոշված դրութեանը հասցնելու վերաբերութեամբ։ Ֆինանսների մինիստրը յայտարարում է, որ ծխախոտի մենավաճառութիւնը այժմեանից մոցնելու մասին տարածված լուրերը չատ վաղահաս են։ Մինիստրութիւնը զբաղված է մտքը մեծացնելու համար միջոցներ փնտռելով՝ ի միջի այլոց, և ծխախոտի հարկից, բայց, այդ դէպքում, մենավաճառութեան մոցնելը նախատեսված չէ, և յամենայն դէպս, ենթադրված է, թէ այս և թէ գալ տարի, պահպանել ծխախոտի հարկահանութեան այժմեան սիստեման։ Երէկ, համալսարանի դահլիճում, ուսումնարանական շրջանի հոգաբարձուի ներկայութեամբ, համալսարանի ռեկտորը դարձաւ ուսանողներին մի ճառով, նորերումս երեք ուսանողների բռնվելու առիթով, որոնց մօտ գտնվեցան պայթող գործիքներ։ Ռեկտորը ասեց, որ այդ թշուառները, որոնք համալսարան են մտել միմիայն կէս տարի առաջ, արատաւորեցին ուսանողական գեղեցիկ ընտանիքը։ Այդպիսի կարճ ժամանակամիջոցում, նրանք դեռ չեն կարողացել 'ի հարկէ ենթարկվել դիտութեան և աշխատանքի բարերար ազդեցութեանը,—բայց բոլորեքեանք չը դիտեն այդ բանը, և չատերը, յիշեալ ձերբակալութեան սարսափելի լուրի ազդեցութեան ներքոյ, կարող են ընդհանուր եղբայրացութիւններ դուրս բերել Պետերբուրգի համալսարանի մասին։ «Ես գիտեմ, շարունակեց ռեկտորը,—որ տխրութեամբ խոնարհվելով իրողութեան առջև, այնու ամենայնիւ, դուք ամենքդ, ինձ նման, անհրաժեշտութիւն էք զգում արտայայտել ձեր սրտի զայրոյթը և ասել ձեր մասին կասկածաւորներին. «Այդպէս մի մտածէք. Պետերբուրգի համալսարանի ուսանողները իրանց մատաղ հոգու ամբողջ զօրութեամբ բողոքում են կատարված սդեղ իրողութեան դէմ։ Նրանք լաւ գիտեն, որ համալսարանը տալիս է նրանց ճշմարտութիւն և ցոյց է տալիս աշխատանքը, և դրանով տանում է դէպի արդարութեան և կարգապահութեան յարգելը, ընդարձակօրէն զարգացնելով գիտական ճշմարտութիւնները։ Համալսարանը՝ ազգային հիմնարկութիւն է, և նրա մէջ էլ նոյնպիսի լայնատարած կերպով աճում է ճշմարտութիւնը, ինչպէս աճում և ամրապնդվում է սէր թէ դէպի հայրենիքը՝ և թէ դէպի նրա հետ անքակտելի կերպով կապված, վաղուց նրա մասին հոգացող ինքնակալը։ Համալսարանի գործիչների կոչումը չէ՝ քանդել և աւերել, այլ՝ ստեղծել և գործել. իշխանութեան խորտակումը չէ նրանց նպատակը, այլ յարգանք դէպի կարգը և իշխանութիւնը։» Եթէ այդ մտքերը մեզ ամենքիս միացնում են իրրև մի ամբողջութիւն համալսարանի մէջ, բարձրացնենք ուրեմն վշտից խոնարհ-

ված մեր զլուխները, և մեզ համար այս տխուր օրերին որոնենք մեր միակ սփոփանքը նրանում, որ մենք ամենքս, մեր ամբողջ համալսարանը, պրոֆէսորների ամբոջ խումբը և բոլոր ուսանողները, ամենքը ինչպէս մի մարդ, մօտեցնենք մեր թագակիր խնամակալ թագաւոր Կայսրի ոտներին՝ մեզ ոգևորող ամենահպատակ և ջերմ սիրոյ զգացմունքները։ Այդ նոյն մտքով, համալսարանի խորհուրդը, ենթադրում է դրել մի ուղերձ բոլոր պրոֆեսորների, բոլոր ուսանողների կողմից, Պետերբուրգի ամբողջ համալսարանի կողմից։» Բէկտորի ճառը ընդհատվում էր չարունակ և բուռն ծափահարութիւններով. իսկ ճառի վերջանալուց յետոյ, ուսանողների ոգևորված բացականչութիւններին յաջորդեց ազգային հիմնը և բարձրաձայն «Ուրան» երկար ժամանակ թնդեցնում էր համալսարանի չինութիւնը։

ՍՕՖԻԱ, 7 մարտի։ Համարեա բոլոր ցանկալի կանները, որոնք Սոֆիայում ձերբակալված էին, արձակվեցան։ Կարավելով և նորա կողմնակիցները առ այժմ մնում են հսկողութեան ներքոյ։

ԲԵՐԼԻՆ, 7 մարտի։ Երէկ ուղևորվեցին դէպի Պետերբուրգ երկու գերմանացի սպաներ՝ Կայսր Ալէքսանդրի թիկնապահ գնդի զինուորների հետ միասին, որպէս զի ներկայանան Կայսրին նոր զինաւորութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 7 մարտի։ Համայնքների ժողովին հաղորդվեցաւ, որ մինիստրութեանը ոչինչ յայտնի չէ Հնդկաստանի կառավարութեան մտադրութեան մասին՝ Պիշինի մօտ հսկող զօրագունդ կենտրոնացնելու վերաբերմամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ Թ. Ֆլիսի և Քութայիսի կալուածական բանկերի գրաւական թղթերը արժեն 97 ր., Թիֆլիսի քաղաքային կրեդիտի ընկերութեան օբլիգացիաները 84½ բուրլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ Դոնի զօ աչքանի Ուստ-Բէլօկալիտվինի կօզակ քաղաքացիները ներկայացրին Թագաւոր Կայսրին ամենահաւատարիմ ուղերձ, որի մէջ արտայայտելով հաւատարմութեան զգացմունքներ և իրանց պատրաստականութիւնը՝ չը խնայել իրանց կեանքը Կայսրի, Կայսրուհու, Թագաժառանգի և ամբողջ թագաւորական տան պաշտպանութեան, և Կայսրի ու հայրենիքի թէ ներքին և թէ արտաքին թշնամիներին խորտակելու համար, խնդրում են փոխել Զերնօվի ագարակի անունը, և յատկացնել նրան Նիկոլաևսկի անունը, ի պատիւ Օդոստափառ Ատամանի, և այդպիսով մաքրել այդտեղից արատը, որի բնակիչ սպայ Զերնօվ,—ինչպէս այդ իմացել են մասնաւոր կերպով ուղերձի ստորագրողները,—յանդգնել է դժգոհութիւն յայտնել Կայսրի դէմ, մոռացել է իր ինքնակալի առատաձեռնութիւնը, չէ երկնչել Աստուածային դատաստանից, և ամբողջ Դոնին պատճառեց տրտմութիւն և նախատինք մեծ Ռուսաստանի առաջ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց Բարձրագոյն հրամայել. փոխել Զերնօվի ագարակի անունը և տալ Նիկոլաևսկի անունը, և չնորհակալութիւն յայտնել Ուստ-Բելօկալիտվինի կօզակների հաստատակամութեան արտայայտած հաւատարմութեան զգացմունքների համար։

ՎԱՐՇԱՎԱ, 8 մարտի։ Երէկ Ժընեվում մեռաւ լեհացի յայտնի գրող Կրաշեվսկի։

ՍՕՖԻԱ, 8 մարտի։ Ազգային ժողովը, ինչպէս երևում է, մարտի վերջից առաջ չի գումարվի։

Կ. ՊՕԼԻՍ, 8 մարտի։ Դեսպան Նելիդօվ խնդրեց տեսակցութիւն Սուլթանի հետ։ Այդ տեսակցութիւնը նշանակվեցաւ մարտի 13-ին, բայց յետոյ փոխվեցաւ այդ օրը, և ռուսաց դեսպանը կընդունվի վաղը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ «Новое Время» լսել է, որ պետական խորհուրդը վերջնականապէս վճռել է ձեռք բերել Ուրալեան հանքային գործարանների ճանապարհը, փոխարինելով ընկերութեան ակցիաները օբլիգացիաների վրա, վճարելով 4 միլիոն բուբլի ընկերութեան պարտքերը ծածկելու համար։ Երէկ վախճանվեցաւ Պետերբուրգում բանաստեղծ Բոզընգէյմ, 67 տարեկան հասակում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 7-ին

Ռուսաց 1 բուբլ	օնդգոնի վրա արժէ		21½	այնս.
— —	Համբուրգի վրա	—	182½	պֆ.
— —	Փարիզի վրա	—	227½	սան.
Ոսկի —	արժէ	— —	9 ›	20 կ.
Մաքսային կուպոններ	—	. .	178 ›	25 ›
Արծաթ	— —	— . . .	1 ›	41 ›
Բորսային գիսկոնտներ	—	. .	5 և 6½%	›
Պետական. բանկ. 5 % տոմս		1-ին չրջանի	100 ›	— ›
— — — —		2-րդ —	99 ›	87 ›
— — — —		3-րդ —	— ›	— ›
— — — —		4-րդ —	99 ›	50 ›
— — — —		5-րդ —	99 ›	37 ›
— — — —		6-րդ —	—	— ›
Արտեզեան 5% փոխառութ.		1-ին չրջ.	99 ›	75 ›
—	—	2-րդ —	100 ›	— ›
—	—	3-րդ —	100 ›	— ›
Ներքին 5% առաջին փոխառութ.			246 ›	25 ›
—	երկրորդ	—	229 ›	50 ›
5½% բէնտա			103 ›	37 ›
Ոսկեայ բէնտա			190 ›	75 ›
Նոր էմոնսիրված փոխառութիւն . .			163 ›	75 ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.			159 ›	— ›
5½% գրաւական թղթեր խերսօնի կալուած. բանկի.			97 ›	— ›
6% գրաւակ. թղ. խարկովի կալ. բան.			102 ›	62 ›
— — Պոլտավայի —		—	101 ›	2 ›
— — Պետ.Զուլսկ.—		—	102 ›	— ›
— — Կիևի —		—	101 ›	75 ›
— — Մոսկվայի —		—	102 ›	50 ›
— — Բեսարաբ. Տավր.—			100 ›	— ›
— — Նիժ. Սամար. —			101 ›	62 ›
— — Վիլնայի —			101 ›	— ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.			— ›	— ›
— —Ռուիայսի-18 և 43 տ.			— ›	— ›
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները			583 ›	50 ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.			278 ›	— ›
Ռիբինսկ-Վոլոգդի ընկ.			99 ›	25 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.			95 ›	62 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .			95 ›	75 ›
Օդէսայի — — .			93 ›	62 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .			— ›	— ›
Նոր երկաթուղային բէնտա . .			99 ›	25 ›
Պետական բանկի 6-դ հրատարակութեան տոմսերը			— ›	— ›
Գրաւ. թղ. Ազնվ. բանկի . . .			99 ›	— ›

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ֆոնդերի վերաբերմամբ հանդարտ է։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՍԱՐԱՏՕՎ. Տիկին Մ. Փ. Ուղարկեցինք ձեզ «Մշակի» այն 7 հատ համարները, որ դուք ցանկանում էիք ունենալ։ Փոստի ծախսով հանդերձ բոլորը արժէ 50 կօպէկ։ Կարող էք փոստային մարկաներով մեզ ուղարկել 50 կօպէկ։

ԽԱՐԿՕՎ. Ա. Ս. Կանենք այնպէս, ինչպէս դուք ցանկանում էք։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Ս. Մանդինեան. Ձեր նամակը Ռասմոզի դէմ չենք տպի։ Առհասարակ բանակռիւը ճանձրալի բան է և մեծ հասամբ մութ և անհասկանալի,—բայց մանկամարտական բանակռիւը՝ Աստուած հեռու տանի։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

Խնդրում ենք յարգելի հասարակութեանը առնելով
մեր ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆ
և մեր հնարած
ԾԱՂԿԱՀՈՏ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
զգուշանալ կեղծումներից և նմանողութիւններից

6—12 (ե) C. M. 1678 ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, մարտի 18-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւը, նաւապետ ՇԵՕԼՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, Նախկին Արծրունի գալերէում, № 103. 1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, 19/31 մարտի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ PEI-HO (ՊԷՑ-ՀՕ) նաւապետ PELLISSIER (ՊԷԼԻՍԻԷ) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պորտ-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐԿՀԱՐԴԻ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՄ ԳԵՈՐԳ ՀԵԶՈՐԵԱՆ ՀԵԶՈՒՐԵԱՆՑԻ։ 1—3

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԳԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒԼԻԱԿԻ ԱԲԲԱՑՈՒԹԻՒՆԻՑ (GIRONDE)

Ատամների համար բենեդիկտեան հայրերից պատրաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները փչանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամները, մաքրում է և պահպանում է ծնօտը։

ԳԻՆԸ դօրակը 2 և 8 ֆրանկ. փոշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատտա՝ արկղիկը 2 ֆրանկ։

Հիմնարկութիւնը գոյութիւն ունի 1804 թ-ից.

Գլխաւոր ագենտ SEGUIN, Բորդո (Ֆրանսիա).

ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է պ. Բերլրմանի մագազինում և պարֆիւմէրների ուրիշ մագազիններում։

3—48 (ե. չ.)

ԹՈՅԼՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյն պէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կօսմետիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։ Բէրթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց մէջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մազերը սնդայնելու, խատցնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիս Գուտմանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 88—100

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԼԻԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԱՏԵՆԻ մէջ նշանակված է ԱՃՈՒՐԴ 15-ին ապրիլի սոյն ամի, առանց կրկնաճուրդի, կապալով տալու ԱԽԱԼՔԱԼԱՔ ԳԱՒԱՌԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՒՂԵՐԸ։

Անդամ կոնսիստորիայի Ցարութիւն աւագ քահանայ Սուզանաճեանց։ 2—3

Дозволено цензурою, Тифлисъ 9 Марта 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.